Արձանագրություն N 3

ՁԻՀ-ՊԸԾՁԲ-16/11 ծածկագրով պարզեցված ընթացակարգով «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի կարիքների համար անվտանգության և պահնորդական ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21 հունիսի 2016թ.
ժամը 14:30

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի՝
նախագահ՝ Թ. Նալբանդյանը
անդամներ՝ Ա. Մկրտչյանը, Ա. Գրիգորյանը
քարտուղար՝ Գ. Ձանջուղազյանը

Օրակարգ

1. Հայտերի բացման մասին
2. Ընթացակարգի հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

I. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Թ. Նալբանդյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) Հրավերով և հայտարարությամբ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	*Մասնակիցների անվանումները*		*Մասնակիցների հասցեները և կապի միջոցները*
1	«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	-	ք. Երևան, Թումանյան 2-րդ փակուղի, 1-ին տուն, 2-րդ բն., հեռ. 010 53-78-50 office@pantera.am
2	«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ*	-	ք. Երևան, Խանջյան 13/3, հեռ. 010 54-55-75, 091 99 31 44, trans.spher@gmail.com
3	«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ	-	ք. Երևան, Արաբկիր 49 փող. Թիվ 1տ. Հեռ. 010 20 02 65, low@armobil.am
4	«Ֆիլյոր» ՍՊԸ*	-	ք. Երևան, Կ. Ուլնեցու 61/12, հեռ. 010 24 00 37, info.fileur@gmail.com

* Մասնակիցը ԱԱՀ վճարող չի

բ) Մասնակիցների կողմից առաջարկված գինը հետևյալն է.

N	*Մասնակիցների անվանումները*	*Մասնակիցների առաջարկած գները առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)*	
1	«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	-	8400000
2	«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ		7560000
3	«ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ	-	8640000
4	«Ֆիլյոր» ՍՊԸ	-	8899000

գ) - հայտերի հետկանչ կամ փոփոխություններ չեն եղել,
- հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Թ. Նալբանդյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված հայտերը և արձանագրեց, որ՝

ա/ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են «ՁԻՀ-ՊԸԾՁԲ-16/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված ծրարների կազմման և ներկայացման պահանջներին:

բ/ բացված յուրաքանչյուր ծրարում առկա են հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը

գ/ բոլոր մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին՝ բացառությամբ «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ի և «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ կողմից հայտերով ներկայացրած փաստաթղթերի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար, բացառությամբ «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ի և «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի հայտերի՝ հայտերով ներկայացված հայտի ապահովման վճարման պահանջագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին:

բ/ մերժել «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ի և «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի հայտերը հետևյալ հիմնավորմամբ՝ հայտերով ներկայացված հայտի ապահովման վճարման պահանջագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջագրի լրացման պայմաններին՝ հրավերով սահմանված վճարման պահանջագրի լրացման կարգի 2-րդ կետի համաձայն «ներկայացման ամսաթիվը» լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը: Հայտերով ներկայացված հայտի ապահովման վճարման պահանջագրի ամսաթիվը լրացված է վճարողի կողմից, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել՝ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ին, 2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել՝ «Ֆիլյոր» ՍՊԸ -ին:

բ/ առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

գ/ հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ << ֆինանսների նախարարություն << պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ:

դ/ փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ք. Երևան, Հ. Էմինի 123 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ _____ Թ. Նալբանդյան

անդամներ՝ _____ Ա. Մկրտչյան

_____ Ա. Գրիգորյան

քարտուղար՝ _____ Գ. Ձանջուղազյան